No. 12 Դեկտեմբեր 2015

ԵԱՀԿ Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպություն
Երևանյան գրասենյակ

ԼՐԱՏՈՒ

ԵԱՀԿ Երևանյան Գրասենյակ

Նշվեց Հելսինկյան Եզրափակիչ Ակտի 40-րդ Տարելիցը

ՀՀ կառավարության բարձրաստիճան պաշտոնյաներ, ԵԱՀԿ քարտուղարության, քաղաքացիական հասարակության և լրատվամիջոցների ներկայացուցիչներ սեպտեմբերի 16-ին հավաքվել էին Երևանում ԵԱՀԿ երևանյան գրասենյակի կողմից ԵԱՀԿ հիմնադիր փաստաթղթի՝ Հելսինկյան եզրափակիչ ակտի 40-րդ տարելիցի առթիվ կազմակերպված միջոցառմանը: Միջոցառման ժամանակ ներկայացվեցին Հայաստանի ազգային օպերատոր «Հայփոստ»-ի կողմից հատուկ այդ տարելիցի կապակցությամբ պատրաստված ԵԱՀԿ-ին նվիրված նամականիշով ծրարը, ինչպես նաև ԵԱՀԿ-ի և ԵԱՀԿ երևանյան գրասենյակի մասին գրքույկ՝ բարձրաստիճան պաշտոնյաների ուղերձներով, և լուսանկարների ցուցահանդեսը: Բուհական ուսանողները մրցեցին 40-րդ տարելիցին նվիրված ազգային բանավեճի շրջանակում, իսկ ԵԱՀԿ մոդել համաժողովի նախկին մասնակիցները հավաքվեցին ոչ պաշտոնական «ԵԱՀԿ սրճարան»-ում:

Այց Սյունիքի Մարզ

Սեպտեմբերի 28-ից մինչև հոկտեմբերի 1-ը գրասենյակի ղեկավարն այցելեց Սյունիքի մարզ՝ Հելսինկյան եզրափակիչ ակտի 40-րդ տարելիցի կապակցությամբ: Գրասենյակը մարզին օգնություն է ցուցաբերում տնտեսական ու բնապահպանական հարցերով՝ իր Կապանի Ծրագրերի իրականացման գրասենյակի միջոցով: Սյունիքի մարզպետը և ԵԱՀԿ դեսպանը բացեցին չորս կիլոմետրանոց ոռոգման ջրագիծը, որը վերականգնվել է ՄԱԶԾ-ի համագործակցությամբ՝ հանքերի պոչամբարների աղտոտվածությունը խոշոր գյուղատնտեսական գյուղում կանխարգելելու համար: Դեսպանն այցելեց Սյունիքի մարզային նյարդահոգեբուժական դիսպանսեր, որտեղ տեղադրվել է փորձնական արևային ջրատաքացուցիչ համակարգ, ինչը հիվանդանոցի համար տարեկան կտրվածքով կապահովի էներգիայի զգալի խնայողություն (2 միլիոն ՀՀ դրամ), կբարելավի հիվանդների սանիտարական պայմանները և կկանխարգելի տարեկան 40 տոննա ածխածնի արտանետումը: Դեսպանը և մարզպետը հյուրընկալվեցին նաև ,Բրդից կարպետե արհեստանոցում, որը ԵԱՀԿ աջակցությամբ հիմնադրվել է Շինուհայր գյուղում՝ «Գորիսի կանանց ռեսուրս կենտրոն»-ի կողմից: Արհեստանոցը աշխատատեղեր է ապահովում 43 տեղացի կանանց համար, ովքեր կարպետներ, գուլպաներ, այլ աքսեսուարներ են պատրաստում տեղական բրդից:

Ընտանեկան Բռնություն, Ոստիկանություն և Համայնքներ

Քանի որ ոստիկանությունն առանցքային դեր է կատարում ընտանեկան բռնության հայտնաբերման ու կանխման հարցում, ինչպես նաև հաշվի առնելով, որ անհատները և ընտանիքները իրավապահ մարմիններին հաճախ դժկամությամբ են հայտնում ընտանեկան բռնության մասին, Գրասենյակը աշխատանքներ է իրականացնում ոստիկանության և համայնքի այլ դերակատարների միջև համագործակցությունը բարելավելու համար: Գրասենյակի աջակցությամբ ոստիկանության մի քանի բաժանմունքներում բացվել են տեղեկատվական անկյուններ, որտեղ ներկայացված են հոգեբանական, սոցիալական, իրավական աջակցության, կացարանի և այլ ծառայությունների մասին տեղեկատվական նյութեր: Կազմակերպվել են նաև վերապատրաստումներ դպրոցների տեսուչների համար, ովքեր հաճախ առաջինն են ճանաչում ընտանեկան բռնության մասին նախազգուշացնող նշանները: Մշակվել և Երևանի ոստիկանության անչափահասների հարցերով զբաղվող տեսուչներին է տրամադրվել ընտանեկան բռնության զոհերին տրամադրվող օգնության մասին ձեռնարկ և ԸԲ հարցերով զբաղվող կազմակերպությունների տվյալների բազայի էլեկտրոնային ձայնասկավառակներ:

Քրեակատարողական Ոլորտի Բարեփոխումներ

Քրեակատարողական ոլորտի բարեփոխումներին աջակցելու համար, գրասենյակը՝ ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական վարչության համագործակցությամբ, կազմակերպեց երկու աշխատաժողով Ծաղկաձորում՝ դատապարտյալների վերականգնողական աշխատանքների մեջ ներգրավված և սոցիալական օգնություն տրամադրող 50 քրեակատարողական ծառայողների աշխատանքը բարելավելու նպատակով: Գրասենյակն օգնել է նաև Փաստաբանների պալատին՝ ազատությունից զրկված և սոցիալապես խոցելի անձանց անվճար իրավաբանական օգնություն տրամադրելու համար: Հանրային պաշտպանի գրասենյակի և Փաստաբանների պալատի աշխատանքը հեշտացնելու նախաձեռնության շրջանակում 15 փաստաբաններ այցելեցին 5 քրեակատարողական հաստատություններ 5 մարզերում և տրամադրեցին իրավական խորհրդատվություն:

Կանանց Տնտեսական Հզորացում

Սյունիքի մարզում, որտեղ կանայք կազմում են գործազուրկների շուրջ երկու երրորդը, Գրասենյակը աշխատատեղեր է ստեղծել ավելի քան 120 տեղացի կանանց համար Գորիսում, Կապանում, Մեղրիում, Սիսիանում և Շինուհայրում, ովքեր մասնագիտացել են թել մանելու, կարպետագործության, հելունագործության, ասեղնագործության և կավագործության մեջ:

Տնտեսական Հնարավորությունների Բացահայտում

Եվրասիական տնտեսական միության Հայաստանի անդամակցության արդյունքում, գրասենյակը պատրաստեց վերլուծություն՝ իրավական դաշտի ու կարգավորող օրենսդրությունում առկա թերությունների, տեղական և օտարերկրյա ձեռնարկությունների համար նոր շուկայի և ներդրումների հնարավորությունների ու գոյություն ունեցող մարտահրավերները ձեռներեցների կողմից հաղթահարելու արդյունավետ գործիքներ ստեղծելու մասին:

Սահմանադրական Հանրաքվե

Գրասենյակը օգնեց բարձրացնել իրազեկվածությունը սահմանադրական բարեփոխումների գործընթացի մասին և, համագործակցելով կառավարության ու քաղաքացիական հասարակության հետ, կազմակերպեց թեմատիկ քննարկումներ՝ ուշադրության արժանացնելով տարբեր գլուխներում առաջարկվող փոփոխությունները: Քննարկումներին մասնակցեցին սահմանադրական փոփոխությունները մշակած մասնագիտական հանձնաժողովի փորձագետները, կառավարության անդամները, խորհրդարանական խմբակցությունները, ՀԿ-ների և միջազգային համայնքի ներկայացուցիչները և կարծիքներ փոխանակեցին բարեփոխման էության մասին:

Անցում Թվային Հեռարձակման

Գրասենյակն աջակցել է Հայաստանում անալոգայինից վերգետնյա թվային հեռարձակման (որը պաշտոնապես ուժի մեջ է մտել 2016 թվականի հունվարի 1-ից) անցնելու խնդիրների կարգավորման ջանքերին: Նոյեմբերի 12-ին գրասենյակը հյուրընկալեց կլոր սեղան՝ կառավարության, խորհրդարանի, քաղաքացիական հասարակության, լրատվամիջոցների, միջազգային կազմակերպությունների և մասնավոր հատվածի 60 ներկայացուցիչների մասնակցությամբ: Կարծիքների փոխանակումը ցույց տվեց, որ թեպետ թվային ցանցի տեխնիկական կառուցումը հաջողությամբ ավարտվել է, սակայն թվային ազդանշանի հասանելիությունը ողջ հանրության համար դեռևս մնում է չլուծված: Քննարկման ընթացքում առանձնացվեց նաև օրենսդրական փոփոխությունների կարիքը, որը թույլ կտա մարզային հեռարձակողներին շարունակելու իրենց գործունեությունը և խթանելու լրատվամիջոցների բազմակարծությունը: Քննարկմանը հաջորդեց ՀՀ տրանսպորտի և հաղորդակցության նախարարության կողմից մշակված փոփոխությունների ընդունումը Ազգային ժողովի կողմից՝ 2015 թ. դեկտեմբերի 17-ին: ԵԱՀԿ մամուլի ազատության հարցերով ներկայացուցչի գրասենյակը միջազգային անկախ փորձագետին պատվիրել է գնահատել նոր փոփոխությունների համապատասխանությունը միջազգային չափանիշներին և ԵԱՀԿ առաջարկություններին:

Արդարադատության Մատչելիություն Բնապահպանական Հարցերում

Արդարադատության մատչելիության առնչությամբ Օրհուսի կոնվենցիայի դրույթների երաշխիքները քննարկվեցին աշխատաժողովի ընթացքում, որը սեպտեմբերին կազմակերպվել էր գրասենյակի կողմից՝ «Տնտեսահրավական վերլուծությունների կենտրոն» ՀԿ-ի հետ, համագործակցելով Տնտեսական ու բնապահպանական գործունեության հարցերով ԵԱՀԿ համակարգողի գրասենյակի հետ: Մասնակիցները պատմեցին իրենց փորձի մասին, հստակեցրեցին մարտահրավերները և բացահայտեցին Օրհուսի կոնվենցիայի կենսագործումն ընդլայնելու հնարավոր ուղիները:

Անվտանգության Ոլորտի Բարեփոխում

Նոյեմբերի 10-13-ը գրասենյակը, Ավստրիայի ազգային պաշտպանության ու սպորտի նախարարությունը, Զինված ուժերի ժողովրդավարական վերահսկողության Ժնևի կենտրոնը/Միջազգային անվտանգության ոլորտի խորհրդատվական թիմը (ՁՈՒԺՎ/ՄԱՈԽԹ), Բելգրադի անվտանգության ոստիկանության կենտրոնը և Անվտանգության համագործակցության ԵԱՀԿ ֆորումը համատեղ կազմակերպեցին աշխատաժողով՝ անվտանգության ոլորտի բարեփոխման լավագույն պրակտիկան փոխանակելու համար: Մասնակիցների թվում էին ՀՀ արտաքին գործերի, պաշտպանության, արդարադատության, ֆինանսների, էկոնոմիկայի, արտակարգ իրավիճակների և տարածքային կառավարման, աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունների, ՀՀ ոստիկանության, ՀՀ զինվորական դատախազության, ՀՀ ազգային ժողովի և ՀՀ նախագահի աշխատակազմի ներկայացուցիչներ, ինչպես նաև ԵԱՀԿ գրասենյակի ներկայացուցիչներ՝ Ուկրաինայից, Մոնտենեգրոյից և Ղրղզստանից:

Հարկադիր Աշխատանքի և Աշխատանքային Թրաֆիքինգի Փորձնական Հետազոտություն

Գրասենյակն աջակցել է չափահասների և երեխաների շրջանում հարկադիր աշխատանքի և աշխատանքային թրաֆիքինգի դեպքերի բացահայտման վերաբերյալ փորձնական ուսումնասիրությանը: Այն իրականացվել է «Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոն - Հայաստան» կազմակերպության կողմից և աջակցություն ստացել ԱՄՆ պետդեպարտամենտի դոնորների՝ Թմրամիջոցների դեմ պայքարի և իրավապահ միջազգային համագործակցության (ԹՊԻՄՀ) ու Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի ու պետությունների մշտադիտարկման գրասենյակների կողմից: Ուսումնասիրությունը տրամադրեց հարթակ Թրաֆիքինգի դեմ պայքարի միջգերատեսչական աշխատանքային խմբին՝ Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի 2016-2018 թվականների ազգային գործողությունների ծրագիր մշակելու համար, որի նախագիծը երևան էր եկել գրասենյակի կողմից աջակցվող դեկտեմբերյան աշխատաժողովի ժամանակ:

Մարդու Իրավունքների Օր

Դեկտեմբերի 10-ին գրասենյակը՝ ՄԱԿ-ի, Եվրոպայի խորհրդի և ԵՄ պատվիրակության հետ կազմակերպեց մարդու իրավունքների մասին՝ HuRiCamp «չկոնֆերանսը», որի օրակարգը կազմել էին մասնակիցներն իրենք: Տարբեր ոլորտներում աշխատող մարդու իրավունքների ակտիվիստները, պաշտպանները և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները մեկտեղվել էին խոսելու մարդու իրավունքների տարբեր հարցերի շուրջ՝ ընկերական, համագործակցային միջավայրում, որը նախատեսված էր ուսուցանելու, փորձի փոխանակման և համագործակցությունը խրախուսելու համար:

Վճռաբեկ Դատարանի Նախադեպային Որոշումներ

Նոյեմբերին գրասենյակի ղեկավարը՝ ՀՀ վճռաբեկ դատարանի և Դատական դեպարտամենտի հետ միասին, ներկայացրեց Վճռաբեկ դատարանի քրեական գործերով 2014 թվականին կայացրած որոշումների ժողովածուն, որը նման վեցերորդ հատորն էր 2008 թվականից ի վեր: Ժողովածուն ծառայում է որպես օգտակար գործիք քրեական իրավունքի բոլոր իրավաբանների համար: Շնորհանդեսի մասնակիցները քննարկեցին Վճռաբեկ դատարանի վերջին 10 տարիների գործունեությունը, ներառյալ այն հիմնարար որոշումները, որոնք ամրապնդեցին կանխատեսելի արդարադատության ապահովման և մարդու իրավունքների արդյունավետ պաշտպանության իրավական մեխանիզմների ստեղծման հիմքը: Գրասենյակը աջակցել է Վճռաբեկ ու Վերաքննիչ դատարանների 30 դատավորների մասնակցությամբ աշխատաժողովը, որտեղ քննարկվեցին և ներկայացվեցին մարդու հիմնարար իրավունքների սկզբունքների վերաբերյալ նախադեպային կարևոր որոշումները:

Գրասենյակն աջակցեց նաև մշակել մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության մասին ձեռնարկը և տպագրել քրեական վարույթի հանրային մասնակիցների վերաբերյալ Քննչական կոմիտեի կողմից պատրաստված հրատարակությունը և Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի տարեկան զեկույցը:

ԵԱՀԿ Մասին

Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպությունը (ԵԱՀԿ) գործում է հանուն իր 57 մասնակից պետությունների **կայունության**, **բարօրության** և **ժողովրդավարության**՝ համընդհանուր արժեքների շուրջ քաղաքական երկխոսության և գործնական աշխատանքների միջոցով՝ հետամուտ բարելավմանը:

ԵԱՀԿ երևանյան գրասենյակը հիմնադրվել է 2000 թվականին Հայաստանին՝ ԵԱՀԿ առջև անվտանգության բոլոր երեք ուղղություններով՝ ռազմաքաղաքական, տնտեսական և բնապահպանական և մարդու իրավունքներ, ստանձնած իր պարտավորությունների կատարմանը օժանդակելու համար:

Հավելյալ տեղեկությունների համար դիմել ԵԱՀԿ երևանյան գրասենյակ՝ **Սունդուկյան 64/1, հեռ. (0037410) 229610/11/12**, **էլ.փոստ՝** yerevan-am@osce.org, **կայքէջ՝** http://www.osce.org/yerevan: